«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ

«ՌԱԶՄԱԿԱՆ» ԱՄԲԻՈՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2022-2023 ուստարի

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 3

2.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ _____4

3. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ_____5

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ_____14

5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ_____23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ռազմական ամբիոնի գործունեությունը հաշվետու 2022-2023 ուստարում միտված է եղել ուսումնական, գիտական գործունեության շարունակական բարելավմանը:

ՇՊՀ ռազմական ամբիոնը 2022-2023 ուստարում իրականացրել է «ՆԶՊ» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր թվով 145 ուսանողների համար: Հաշվետու տարում վերոնշյալ կրթական ծրագրերով ամբիոնն ունեցել է 30 շրջանավարտ (6 շրջանավարտ բակալավր առկա, 18 շրջանավարտ բակալավր հեռակա, 2 շրջանավարտ բակալավր հեռակա (վերականգնված), 4 շրջանավարտ մագիստրատուրա: Ծրագրերի ռազմամասնագիտական առարկաներն իրականացվել են ամբիոնի 7 դասախոսների կողմից:

«ՆԶՊ» Մասնագիտական Կրթական Ծրագիրը (ՄԿԾ) ևս ենթարկվեց փորձագիտական գնահատման: ՄԿԾ- ների բարելավման անհրաժեշտությունը պայմանավորված է եղել ՇՊՀ ռազմավարական ծրագրին համահունչ «Լավարկված կրթական ծրագրեր» կատարողական ցուցիչի ապահովմամբ: «ՆԶՊ»մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը մանրամասն նկարագրվեցին ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների: Նախորդ ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը փոխարինվեցին մի ամբողջական փաթեթով՝ Մասնագիտական Կրթական Ծրագիր: ՄԿԾ-ի յուրաքանչյուր դասընթաց (կրթական մոդուլ) ունի առարկայական նկարագիր, որը դասավանդող դասախոսների կողմից մշակվեցին՝ ըստ կրթական վերջնարդյունքների, կոմպետենցիաների, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների, ինչպես նաև ուսանողի ծանրաբեռնվածության հիման վրա տրամադրվող կրեդիտի: Ամբիոնի դասախոսական կազմի կողմից դասավանդվող յուրաքանչուր առարկայի (մոդուլի) համար մշակվեցին և վերամշակվեցին ու բուհի պաշտոնական կայք էջում տեղադրվեցին էլեկտրոնային դասախոսությունների փաթեթները՝ դուրս գալով առարկայի վերջնարդյունքից:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՇՊՀ ռազմական ամբիոնի առաքելությունն է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողություններով և անհրաժեշտ գիտելիքներով օժտված ՆԶՊ մասնագետների պատրաստումն է բակալավրի և մագիստրոսի որակավորումներով՝ մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման միջոցով: Այդ նպատակով անցկացվել է բենչմարկինգ մոտոհրաձգային դասակի հրամանատար կրթական ծրագիրն իրականացնող Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի համապատասխան ԿԾ-ի հետ, անցկացվել են հանդիպումներ և քննարկումներ ամբիոնի ՊԴ կազմի հետ, ներգրավելով ուսանողներ, շրջանավարտներ, աշխատաշուկայի ներկայացուցիչներ:

Ռազմական ամբիոնի գործունեությունը միտված է իր առաքելությունից բխող հետևյալ նպատակներին.

1.ձևավորել ուսանողակենտրոն միջավայր, որակի և սովորելու մշակույթ՝մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) որակավորումների համադրելիության ապահովման, փոփոխվող միջավայրի մարտահրավերներին դիմակայելու համար,

2. ձևավորել մշակույթ՝ գիտական, հետազոտական աշխատանքների իրականացման, շրջանավարտներին աշխատանքային կարիերային նախապատրաստելու, միջավայրում ինտեգրվելու համար,

3. ձևավորել մշակույթ՝ նպաստելով հասարակությանը մատուցվող կրթական և այլ ծառայությունների թափանցիկություն և հաշվետվողականություն:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2022-2023 ուստարում իրականացվեց ծավալուն և լուրջ աշխատանք՝ ուսումնական պլանների (բազային և աշխատանքային), Մասնագիտական Կրթական Ծրագրերը (ՄԿԾ) վերջնարդյունքներով ներկայացնելու ուղղությամբ: «ՆԶՊ»մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը մանրամասն նկարագրվեցին ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Նախորդ ուսումնական պլաններին և առարկայական ծրագրերին փոխարինեց մի ամբողջական փաթեթ՝ Մասնագիտական Կրթական Ծրագիր (ՄԿԾ), որի կառուցվածքային բաղադրիչներն են.

1. **Մասնագիտության մասնագիր**
2. **Ուսումնական պլանի կառուցվածք**
3. **Ուսումնական պլան**
4. **Առարկայական նկարագրեր**
5. **ՄԿԾ-ի բովանդակությունը՝ ըստ կոմպետենցիաների**

1.1. Մասնագիտության մասնագիրը ներառում է ամբողջական տեղեկություն կրթական ծրագրի վերաբերյալ.

- Ծրագրի անվանումը
- Որակավորումների ազգային շրջանակի մակարդակը
- Մասնագիտությունը, աստիճանը և շնորհվող որակավորումը
- Կրեդիտների քանակը
- ՄԿԾ-ն իրականացնող բուհի, ֆակուլտետի, ամբիոնի անվանումները
- Ուսուցման լեզուն
- Լիցենզավորված /հավատարմագրված/ լինելը
- ՄԿԾ-ի մուտքի պայմանները
- Ծրագրի նկարագիրը
- Ծրագրի նպատակը
- Մասնագիտության ծրագրի կրթական վերջնարդյունքները / կոմպետենցիաները /
- Ծրագրի կառուցվածքը՝ ըստ համապատասխան կրեդիտների
- Գնահատման մեթոդները
- Դասավանդման և ուսումնառության մեթոդները

2.1. Ուսումնական պլանի կառուցվածքը ներառում է.

1. Կրթամասերը (ընդհանուր հումանիտար և սոցիալ տնտեսագիտական, ընդհանուր մասնագիտական, հատուկ մասնագիտական)՝ ըստ հանրագումարային կրեդիտների և դասընթաց-մոդուլների քանակի
2. Ուսումնական ծրագրի կրթամասերում ներառված դասընթաց-մոդուլները՝ համապատասխան դասիչներով և հատկացված կրեդիտներով

3.1. Ուսումնական պլանը ներառում է.

Ըստ կիսամյակների ամրագրված դասընթացները՝ համապատասխան լսարանային ժամաքանակի բաշխվածությամբ և ստուգման ձևերով:

4.1. Յուրաքանչյուր դասընթաց (կրթական մոդուլ) ունի առարկայական նկարագիր: Առարկայական նկարագիրը ներառում է.

- Թողարկող ամբիոնը
- Առարկայի անվանումը և ընթացիկ մոդուլը
- Առարկայի դասիչը և մոդուլների քանակը
- Մասնագիտությունը
- Կուրսը / կիսամյակը
- Դասընթացի նպատակը
- Կրթական արդյունքները
- Դասընթացի կազմակերպման նկարագիրը
- Նախապայմանները
- Դասավանդման և ուսումնառության մեթոդները
- Դասընթացի համառոտ բովանդակությունը
- Գրականությունը (հիմնական, լրացուցիչ)
- Ստուգման և գնահատման ձևերը
- Գնահատման բաղադրիչները և կշիռը
- Գնահատման սանդղակը
- Այլ տեղեկություններ

5.1. ՄԿԾ-ի բովանդակությունը՝ ըստ կոմպետենցիաների ներառում է.

- Յուրաքանչյուր առարկայի վերջնարդյունքում ուսանողի ձեռք բերած կոմպետենցիաները՝ ըստTUNING մեթոդաբանության
- Ուսանողի ձեռք բերած ընդհանրական կոմպետենցիաները՝ ըստ գործիքային, միջանձնային և համակարգային բաղադրիչների
- Ուսանողի ձեռք բերած մասնագիտական կոմպետենցիաները՝ ըստ առարկայական և մանկավարժական բաղադրիչների

Առարկայական նկարագրի առանձին մաս է կազմում ուսանողի ծանրաբեռնվածության աշխատաժամանակի հաշվարկը, ըստ որի պայմանավորված է առարկային տրամադրված կրեդիտի չափը:

ՄԿԾ-ների լավարկման նպատակով բուհ-ում անցկացված վերապատրաստման դասընթացներին մասնակցեց ամբիոնի ողջ դասախոսական կազմը: Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնը և ամբիոնի դասախոսական կազմը համատեղ բազմիցս քննարկել, վերլուծել են գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը նպաստող չափանիշները, գնահատման արդյունավետությանը միտված մոտեցումները: Հստակեցվել է ուսանողների կողմից մասնագիտական և մանկավարժական կոմպետենցիաների ձեռքբերման վերջնարդյունքներն ու գործիքակազմը:

Ամբիոնի դասախոսական կազմի կողմից դասավանդվող յուրաքանչուր առարկայի (մոդուլի) համար մշակվեցին ու վերամշակվեցին և բուհի պաշտոնական կայք էջում տեղադրվեցին էլեկտրոնային դասախոսությունների փաթեթները: Առկա փաթեթները թույլ տվեցին դասընթացները կազմակերպելու ինտերակտիվ մեթոդներով՝ նվազեցնելով դասախոսությունների թելադրման գործընթացը:

Ուսումնամեթոդական վարչության կողմից հաշվետու ուստարում անցկացվեցին ստուգումներ ՄԿԾ-ներում առկա խնդիրների վերհանման, դասընթացների բովանդակության, վերջնարդյունքներին միտված դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համապատասխանության վերաբերյալ: Թեև մասնագիտական կրթական ծրագրում հստակ արտացոլված չէ դասավանդման մեթոդների և վերջնարդյունքների կապը, սակայն ուսանողներն ընդհանուր առմամբ բավարարվածություն են հայտնել կիրառվող դասավանդման մեթոդներից:

ԲՈՒՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում «ՆԶՊ»-ի ՄԿԾ-ն փորձագիտական գնահատման է ենթարկվել: Ըստ փորձագիտական զեկույցի հիմնականում առկա են հետևյալ օբյեկտիվ խնդիրները.

- Կրեդիտների բաշխման ոչ համակարգված մոտեցումը խոչընդոտում է շարժունությանը: Միջազգայնացումը հնարավոր չէ, նման ամբիոնների բացակայության պատճառով:
- Որակավորումների Ազգային Շրջանակի հետ ՄԿԾ-ի համադրելիության բացակայությունը:
- Դասավանդման և գնահատման մեթոդների ընտրությունը ոչ լիարժեք է պայմանավորված դասընթացի վերջնարդյունքներով:

Վերոնշյալ կետերի ուղղությամբ ամբիոնը արդեն իսկ իրականացրել է բավականին քայլեր: Կրեդիտների հաշվարկման մեխանիզմների արդյունավետության բարելավման, վերջնարդյունքներին միտված դասավանդման և գնահատման մեթոդների ընտրության ուղղությամբ յուրաքանչյուր առարկայի համար իրականացվել է ծավալուն աշխատանք:

Ամբիոնն 2022-2023 ուստարում ուսումնասիրել է Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի կրթական ծրագրերը՝ պարզելով վերջնարդյունքների համադրելիությունը: ԲՈՒՀ-ի կողմից իրականացված ARMENQA Եվրամիության ծրագրի կողմից մշակվել է մեթոդաբանություն ՄԿԾ-ի համադրելիությունը ՈԱՇ-ին: 2022-2023 ուստարում ամբիոնը համապատասխան մեթոդաբանության հիման վրա իրականացրել է ՄԿԾ-ի և ՈԱՇ-ի համադրելիությունը:

Մասնագիտական կրթական ծրագրերը իրականացվում են ՇՊՀ-ի հագեցված և ռազմական ամբիոնի մասնագիտացված համապատասխան լսարաններում:

«ՆԶՊ»մասնագիտությամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի կարևորագույն բաղկացուցիչ մասն են կազմում պրակտիկաները (մանկավարժական, ուսումնական, ուսումնազորային, գիտամանկավարժական, հետազոտական): Հաշվետու տարում բակալավրի կրթական ծրագրով նախատեսված մանկավարժական պրակտիկաները կազմակերպվել և անցկացվել են ըստ վերանայված և հաստատված ընթացակարգի, որը թույլ է տալիս պրակտիկաները կազմակերպել համապատասխան փուլերով (ճանաչողական-կազմակերպչական, կիրառական-վերլուծական, ամփոփիչ-գնահատող) և գնահատել ըստ կրթական ծրագրի պահանջված վերջնարդյունքների:

Ուսանողները ուսումնառության ընթացքում անցնում են 2 մանկավարժական պրակտիկաներ ըստ ընտրած մասնագիտության: Պրակտիկայի արդյունավետ անցկացմանը նպաստում է նաև ամբիոնի ունեցած ուսումնական զենքի ու նյութական բազայի տրամադրումն ուսանողներին դասերն ավելի պատկերավոր և բովանդակալից անցկացնելու համար:

Պրակտիկայի ընթացքում ուսանողները հիմնականում միշտ էլ հանդես են բերել ոչ միայն մասնագիտական գիտելիքների կիրառման գործնական հմտություններ, այլև նաև միջոցառումների անցկացման բարձր կազմակերպչական ունակություններ, որոնց համար դպրոցների տնօրինության կողմից արժանացել են շնորհակալագրերի և պատվոգրերի:

2022-2023 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԱՄԲԻՈՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ՝ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ՎԱՅՐԵՐԻ

Մասնագիտություն	Պրակտիկայի տեսակը	Կուրս ուսուցման ձև	Ուսանողների թիվ	Անցկացման վայրը	
				Պրակտիկայի վայրը	Դաշտային պրակտիկայի երթուղիներ
ՆԶՊ(բակալավր)	մանկավարժական	IV առկա	6	ՇՊՀ ավագ դպրոց, թիվ 10,11 հիմն. դպրոցներ	
		III առկա	12	Օյումջյան միջն. դպրոց-վարժարան, թիվ 11,7 հիմնական և թիվ 23 միջն.դպրոցներ	
		IV հեռակա	17	Օյումջյան միջն. դպրոց-վարժարան, թիվ 11,41 հիմնական և թիվ 23 միջն.դպրոցներ	
		V հեռակա	18	ՇՊՀ ավագ դպրոց, 23 միջն. դպրոց, թիվ 1, 37 ավագ դպրոցներ	
ՆԶՊ (մագիստրատուրա)	մանկավարժական	II	4	ՇՊՀ ռազմական ամբիոն, Լոռու մարզ	
	գիտամանկավարժական	II	4	ՇՊՀ ռազմական ամբիոն, Լոռու մարզ	

2022-2023 ուստարում գնահատվեց և վերաորակավորվեց «ՆԶՊ»մասնագիտությամբ ռազմա-դաշտային պրակտիկաների կազմակերպումը: Մինչ այժմ ամբիոնն իրականացրել է ուսումնա-զորային հավաքներ, որը յուրաքանչյուր ուստարվա համար ունի առանձին ուսումնական պլան, հաստատված ՀՀ ՊՆ կադրերի և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչության պետի կողմից: ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամանով առկա 3-րդ և հեռակա 4-րդ կուրսերի ուսանողները հունիս-հուլիս ամիսներին մասնակցելով նախատեսված ուսումնա-զորային հավաքներին հանձնել են <<Մարտավարություն>> և <<Կրակային պատրաստություն>> առարկաներից պետական քննություններ:

Հաշվետու տարում այդ քննություններին ուսանողները ցուցաբերել են հետևյալ առաջադիմությունը՝ առկա ուսուցում <<Գերազանց>> 59%, Լավ>> 8%, << <<Բավարար>> 33%, հեռակա՝ <<Գերազանց>> 12%, <<Լավ>> 32%, << Բավարար>> 56% : Այդ քննությունների արդյունքները միշտ էլ զոհացրել են ՀՀ ՊՆ հանձնաժողովի անդամներին: Հատկապես մատնանշվել է աղջիկ ուսանողների հրաձգային վարժությունների ցուցանիշները և հմտությունները:

Առկա 3-րդ



Հեռակա 4-րդ



Կարևորելով նշված հավաքների դերը և նշանակությունը ուսումնական գործընթացում որպես ուսումնառության պարտադիր բաղադրիչ, ինչպես նաև գիտելիքների գործնական կիրառման համար համակարգված փորձադաշտ ՀՀ ԶՈՒ տարբեր կառույցներում, այս հավաքների կարևորությունը կայանում է նաև նրանում, որ հավաքների արդյունքում ուսանողները որակավորվում են որպես մոտոհրաձգային դասակի հրամանատարներ և որի հիման վրա ՀՀ ՊՆ կողմից շնորհվում է պահեստազորի «լեյտենանտ» զինվորական կոչումը: Ամբիոնի շրջանավարտները վերը նշված քննությունների արդյունքների հիման վրա հնարավորություն ունեն բացի զինղեկ աշխատելուց նաև ներգրավվել ՀՀ տարբեր ուժային կառույցներում /ԶՈՒ,ԱԱԾ, ոստիկանություն/ ծառայության սպայական հաստիքներում: Անցյալի բոլոր տարիների շրջանավարտները հիմնականում համալրել են նշված կառույցները, կամ աշխատում են որպես զինղեկներ, ավելին, այսօր էլ հեռակա ուսուցման ուսանողների շուրջ 40 % -ը նշված կառույցների աշխատակիցներ են: Մագիստրոսական թեզերի ղեկավարումն իրականացվում է ամբիոնի դասախոսական ներուժի շնորհիվ: Վերլուծությունները ցույց են տալիս, որ մագիստրոսական թեզերի թեմաները հիմնականում համապատասխանում են դասախոսների գիտական ուսումնասիրման ոլորտին: Սակայն որոշ թեմաների ուղղությամբ համագործակցությունն այլ բուհերի կամ զինվորական ուսումնական հաստատությունների հետ անհրաժեշտություն է: Հետագայում ավելի արդյունավետ գործունեություն ծավալելու նպատակով անհրաժեշտ է համագործակցության պայմանագրեր կնքել:

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ՝ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ

Հ/Հ	Ազգանուն Անուն Հայրանուն	Գիտական աստիճան, կոչում	2019	2020	2021	2022	2023	ԸՆԴԱՄԵՆԸ
1	Մկրտչյան Արթուր Վազգենի		1	-	1			**2**
2	Մուրադյան Վարդան Աշոտի	մանկ. գ. թ.	2	-	2		2	6
3	Հովհաննիսյան Գագիկ Արամայիսի		1	1	1	1		4
4	Կարապետյան Հայկ Հովհաննեսի		2	1	2	1	1	7
5	Տիգրանյան Տիգրան Գևորգի		2	-	2		2	6
6	Մաթևոսյան Ազատ Վարշամի	պրոֆեսոր	-	1	-	1		2
7	Թումասյան Արմեն Լենսիկի		1	-	1			2
8	Պետրոսյան Լուսինե Սարգսի	պատմ.գիտ.թեկ.	1	-	-			1
ԸՆԴԱՄԵՆԸ			10	3	9	3	5	30

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ



2022-2023 ՈՒՍ ՏԱՐՈՒՄ ԱՄԲԻՈՆՈՒՄ ԱՌԿԱ

ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՐՏԱԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ, ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՄԱՔԱՆԱԿ					
	Ընդամենը	Լսարանային	որից			
			Դասախոսություն	Գործնական	Լաբորատոր	Սեմինար
Բակալավր (առկա)	2581	2191	652	1288	-	251
Բակալավր (հեռակա)	1987	1196	302	882	-	12
Մագիստրատուրա	992	656	302	214	-	140
ԸՆԴԱՄԵՆԸ	5560	4043	1256 (31%)	2384 (59%)		403 (10%)

ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ, ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎ	ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՔԱՆԱԿ		ԱՐՏԱԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՔԱՆԱԿ	
	Ընդամենը	Արտահայտված տոկոսներով	Ընդամենը	Արտահայտված տոկոսներով
Բակալավր (առկա)	2191	85%	391	15%
Բակալավր (հեռակա)	1196	60%	791	40%
Մագիստրատուրա	656	66%	336	34%
ԸՆԴԱՄԵՆԸ	4043	73%	1518	27%

2022-2023 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԱՄԲԻՈՆՈՒՄ ԱՌԿԱ ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՐՏԱԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԻ



Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածության 73%-ը լսարանային ժամաքանակն է, իսկ 27%-ը՝ արտալսարանային: Արտալսարանային ծանրաբեռնվածության մեջ մտնում են մագիստրոսական թեզերի, ավարտական և կուրսային աշխատանքների, պրակտիկաների ղեկավարումը, ուսումնազորային հավաքների անցկացումը, հեռակա բաժնի ուսանողների անհատական խորհրդատվությունները, միջանկյալ և ամփոփիչ քննությունների հարցաշարերի, հարցատոմսերի կազմումը, քննությունների անցկացումը և ստուգումը, դասալսումները:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

<<ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ>> ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐՈՒՄ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԻ

ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎ	ԿՈՒՐՍ	2018-2019	2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023
ԲԱԿԱԼԱՎՐ/ԱՌԿԱ/	I	13	6	18	13	7
	II	22	12	6	15	11
	III	12	22	12	5	12
	IV	16	12	22	7	6
ԸՆԴԱՄԵՆԸ		63	52	58	40	36
ԲԱԿԱԼԱՎՐ/ՀԵՌԱԿԱ/	I	20	21	33	15	21
	II	38	34	23	31	16
	III	33	25	19	19	32
	IV	26	22	33	19	17
	V	29	32	22	25	18
ԸՆԴԱՄԵՆԸ		146	134	130	109	104
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ	I	10	9	3	4	1
	II	12	3	9	3	4
ՀԵՏԱԶՈՏՈՂ	I	-	-	-		
	II	-	-	-		
	III	-	-	-		
	IV	-	-	-		
	V	-	-	-		
ԸՆԴԱՄԵՆԸ		22	12	12	7	5
ԸՆԴԱՄԵՆԸ		231	198	200	156	145

«ՆԶՊ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐՈՒՄ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԻ



«ՆԶՊ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐՈՒՄ



Վերջին 5 տարիների ընթացքում նկատելի է ուսանողների թվի անընդմեջ նվազում:

Ուսումնառողների տարեցտարի նվազման պատճառը հանդիսանում է դիմորդ-շրջանավարտների քանակի տարեցտարի նվազումը:

Հաշվետու տարում առկա ուսուցման համակարգում ընդունվել են 9 դիմորդ, ընդ որում մրցույթի արդյունքներով միավորների առավելագույն շեմը եղել է 30,30, իսկ նվազագույնը՝ 20.00, որը գերազանցել են 4 դիմորդ, մնացած 5 դիմորդները ստացել են 27,50 և ավել միավորներ:

1 դիմորդ-ուսանող հաշվետու ուսումնական տարում ՄՈԳ-ը բարձրացրել է:

Ամբիոնը այս առումով շատ անելիքներ ունի: Առաջին հերթին անհրաժեշտ է դպրոցներում մասնագիտական կողմորոշում սկսել ոչ թե ավագ, այլ հիմնական դպրոցից: Հիմնական դպրոցների հետ կնքելով համագործակցության պայմանագրեր՝ ամբիոնի դասախոսների կողմից անհրաժեշտ է իրականացնել որոշակի քայլեր առարկայի նկատմամբ հետաքրքրվածության բարձրացման և լրացուցիչ գիտելիքներ ստանալու ուղղությամբ:

Համալսարանի ղեկավարության կողմից կազմակերպվել է այցելություններ մարզի կրթօջախներ, շրջանավարտներին կողմնորոշելու մասնագիտական ընտրության հարցում: Ըստ այդմ ամբիոնի դասախոսների կողմից պլանավորվում է դպրոցներում որոշակի թեմաներով անցկացնել դասախոսություններ, «ՆԶՊ և նրա դասավանդման մեթոդիկա» մասնագիտությամբ սովորող ուսանողների օգնությամբ կազմակերպել հետաքրքրաշարժ միջոցառումներ, վիկտորինաներ և այլն: Ավագ դպրոցների աշակերտների հետ շարունակել լրացուցիչ պարապմունքները ընդունելության մուտքի շեմի հաղթահարման նպատակով: Հիմնական խնդիր է հանդիսանում Շիրակի մարզի համայնքների դպրոցների շրջանավարտների ներգրավվածությունը կազմակերպվող պարապմունքներին:

ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐԻՆԵՐԻՆ (<<ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ>>/ <<ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ>>) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՑ ՀԵՌԱՑՎԱԾ, ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ, ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎ	ԿՈՒՐՍ	2018-2019					2019-2020					2020-2021					2021-2022					2022-2023				
Բակալավր /առկա/		Հեռացված	Տեղափոխված	Վերականգնված	Տարեկետում ստացած	Բանակ զորակոչված	Հեռացված	Տեղափոխված	Վերականգնված	Տարեկետում ստացած	Բանակ զորակոչված	Հեռացված	Տեղափոխված	Վերականգնված	Տարեկետում ստացած	Բանակ զորակոչված	Հեռացված	Տեղափոխված	Վերականգնված	Տարեկետում ստացած	Բանակ զորակոչված	Հեռացված	Տեղափոխված	Վերականգնված	Տարեկետում ստացած	Բանակ զորակոչված
	I			1		1	2		2		5	3		2		5					11	2	3	2		3
	II	1					1		4		2	1		1			2	1	1							
	III								1		-	1							1							
	IV			1							-						4					4				
ԸՆԴԱՄԵՆԸ		1		2		1						5		3		5	6	1	2		11	6	3	2		3
Բակալավր /հեռակա/	I	1		4		3	2		2		1			2		2			2		5	1		3		3
	II	2	2	9			1	1	4		2	5		4		1	7	3	2			3	3	4		
	III	3		1								1					5					2		3		
	IV			2			2					8					4	1	1			1				
	V											2					2							3		
ԸՆԴԱՄԵՆԸ		6	2			3						16		6		3	18	4	5		5	7	3	13		3
Մագիստրատուրա	I								1																	
	II	1			1					2										1					2	
ԸՆԴԱՄԵՆԸ		1			1																				2	
Հետազոտող																										
ԸՆԴԱՄԵՆԸ																										
ԸՆԴԱՄԵՆԸ		8	2	18	1	4	8	1	14	2	10	21		9		8	24	5	7	1	16	13	6	15	2	6

* -Ներքին տեղափոխություն

**-Այլ բուհեր տեղափոխված կամ այլ բուհերից եկած
*ՄՄՈՒՀ –ից բուհ ընդունված
** Թեզը չի պաշտպանել տվյալ տարում

Տեղափոխությունները միայն ներբուհական են՝ առկա-հեռակա կամ հեռակա-առկա, իսկ հեռացումների (այդ թվում նաև ազատվածներ) հիմնական պատճառներից է նաև արտերկիր մեկնելը:

Հեռացված, վերականգնված և տարկետում ստացած ուսանողների թիվը՝ ըստ ուստարիների



Հեռացված, վերականգնված ֆ տարկետում ստացած ուսանողների ընդհանուր թիվը վերջին 5 տարիներին



«ՆԶՊ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ I-IV ԿՈՒՐՍԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կուրս	Ուսանողների քանակ	Հանրագումարային ՄՈԳ				ՄՈԳ-ը բարձրացրած	ՄՈԳ-ը իջեցրած
		40-70	71-85	86-90	91-100		
I	7	2	3	2	-	-	-
II	11	3	3	4	1	1	-
III	12	4	1	1	6	2	1
IV	6	3	2	-	1	-	-
Ընդամենը	36	12	9	7	8	3	1

«ՆԶՊ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ

	I կուրս	II կուրս	III կուրս	IV կուրս	Ընդամենը
Ուսանողների թվաքանակ	7	11	12	6	36
Բավարար	28%	27%	34%	50%	35%
Լավ	43%	27%	8%	33%	28%
Գերազանց	29%	46%	58%	17%	37%





Նախատեսված լսարանային լրիվ բեռնվածության արդյունքում ուսանողների առաջադիմությունը մտահոգիչ է, քանի որ 35%-ը ունեն բավարար առաջադիմություն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «ՆԶՊ» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի յուրաքանչյուր առարկային տրամադրված կրեդիտները և համապատասխան ուսումնական նյութի ծավալը համադրելի է: Ուսումնական նյութերի տրամադրումը (էլեկտրոնային դասախոսությունների փաթեթ) բարձրացրել է ուսանողների կիսամյակային և տարեկան ՄՈԳ-երը, որի հետևանքով առաջադիմության սանդղակը համադրելի է:

Կրթական ծրագրում առկա համաինստիտուտային առարկաների գնահատականը լուրջ ազդեցություն չի կարող ունենալ ուսանողի ՄՈԳ-ի ձևավորման վրա: Հիմնական խնդիրը ընդհանուր և հատուկ մասնագիտական առարկաների ցածր գնահատականներն են, որոնց հիմնական պատճառներից մեկը հանդիսանում է բոլոր առարկաների միջանկյալ ստուգումների անցկացումը 3 օրվա ընթացքում:

Վերլուծությունների արդյունքում անհրաժեշտ է.

1. Վերանայել ընդհանուր և մասնագիտական առարկաների ստուգման ձևերը, միջանկյալ և ամփոփիչ ստուգումների հարցատոմսերի կառուցվածքը և բարդության աստիճանը:

2. Կազմակերպել պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումներ՝ ուղղված դասավանդման մեթոդների և գիտելիքների գնահատման ձևերին:
3. Վերանայել և բարելավել «ՇՊՀ-ի բակալավրիատի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման» ընթացակարգը:

«ՆԶՊ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ I, II ԿՈՒՐՍԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կուրս	Ուսանողների քանակ	Հանրագումարային ՄՈԳ				ՄՈԳ-ը բարձրացրած	ՄՈԳ-ը իջեցրած
		40-70	71-85	86-90	91-100		
I	1	-	-	-	1	-	-
II	4	-	-	-	4	-	-

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կուրս	Ուսանողների քանակ	Առաջադիմություն
I	21	84%
II	16	60%
III	32	96%
IV	17	100%
V	18	100%
Ընդամենը	104	88%

Հեռակա ուսուցման համակարգի ուսումնառության արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկվում է.

1. Բոլոր դասընթացների համար ներդնել E-learning համակարգ,
2. Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում E-learning համակարգով դասընթացների պատրաստման նպատակով,
3. Հեռակա ուսուցման համակարգի ուսանողների համար ուսանողի ուղեցույցի կազմում:

Հաշվետու ժամանակաշրջանում ռոտացիայի արդյունքով 3 ուսանող բարձր առաջադիմություն ցուցաբերելու համար վճարովի համակարգից անցել են պետ. պատվերի համակարգ:

Հաշվետու տարում գերազանցության կրթաթոշակ են ստացել 14 ուսանողներ:

Առկա 4-րդ կուրսի և հեռակա 5-րդ կուրսի ուսանողները պետական ավարտական որակավորման քննությունները հանձնել են հետևյալ գնահատականներով՝ առկա <<գեր>>-1, <<լավ>>-1, <<բավ>>-4, հեռակա՝ <<գեր>>-1, <<լավ>>-2, <<բավ>>-15, վերականգնված՝ <<անբավ>>-2:

Առկա 4-րդ կուրսի պետական ավարտական քննություն



Հեռակա 5-րդ կուրսի պետական ավարտական քննություն



ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ՝

ՆԵՐԱՌՅԱԼ ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԺԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ



ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ 2022-2023 ՈՒՍՏԱՐՈՒՄ՝ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍՏԱԺԻ

Հ/Հ	Ազգանուն	Անուն	Հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Գիտական կոչում	Ծնող. տարեթիվ	Աշխ. Ստաժ
1	Մկրտչյան	Արթուր	Վազգենի	ամբիոնի պետ	գնդապետ		1980	26
2	Տիտանյան	Մուշեղ	Միքայելի	Ամբիոնի պետի տեղ.-ուս. մասի պետ	փոխգնդապետ		1976	29
3	Մուրադյան	Վարդան	Աշոտի	ավագ դասախոս	փոխգնդապետ մանկ. գ. թ.		1978	22
4	Հովհաննիսյան	Գագիկ	Արամայիսի	ավագ դասախոս	փոխգնդապետ		1963	25
5	Կարապետյան	Հայկ	Հովհաննեսի	ավագ դասախոս	փոխգնդապետ		1979	26
6	Թումասյան	Արմեն	Լենսիկի	դասախոս	մայոր		1968	28
7	Տիգրանյան	Տիգրան	Գևորգի	դասախոս	մայոր		1979	20

ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ, ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ

ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ

- գիտությունների դոկտոր՝ 0
- գիտությունների թեկնածու՝ 1
- առանց գիտական աստիճանի՝ 6



ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ

- պրոֆեսոր՝ 0
- դոցենտ՝0
- առանց գիտական կոչման՝ 7



ԸՍՏ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ

- իգական՝ 0
- արական՝ 7



ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐԻՆԵՐԻ

ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

Տարիքային սանդղակ	2018-2019	2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023
25-30	-	-	-	-	-
31-40	2	1	-	-	-
41-50	3	4	5	5	5
51-60	2	2	2	2	2
61-70	-	-	-	-	-
71 և ավելին	-	-	-	-	-



ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ

ԹՎԱՔԱՆԱԿԸ 2022-2023 ՈՒՍՏԱՐՈՒՄ՝ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

Տարիքային սանդղակ	Թիվ	Տոկոս
25-30	-	0%
31-40		0%
41-50	5	71%
51-60	2	29%
61-70	-	0%
71 և ավելին	-	0%



ԱՄԲԻՈՆԻ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄՆ ԸՍՏ ԲԱԶԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ

Հ/Հ	Ազգանուն Անուն Հայրանուն	Բազային կրթությունը	Որակավորումն ըստ բազային կրթության	Մասնագիտությունը հետբուհական կրթական համակարգում
1	Մկրտչյան Արթուր Վազգենի	Վ.Սարգսյանի անվ. ռազմական ինստիտուտ	Տրանսպորտի շահագործում և կառավարում, ինժեներ-բակալավր	Միավորումների, զորամասերի կառավարում, Ռազմական կառավարման մագիստրոս
2	Տիտանյան Մուշեղ Միքայելի	Հունաստանի ՆԱՏՕ-ի ցամաքային զորքերի ակադեմիա	Մ/Հ դասակի հրամանատար	գումարտակի հրամանատար
3	Մուրադյան Վարդան Աշոտի	Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ	Ռազմագիտության և ֆիզկուլտուրայի ուսուցիչ	
4	Հովհաննիսյան Գագիկ Արամայիսի	Լենինականի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ	Ռազմագիտության և ֆիզկուլտուրայի ուսուցիչ	
5	Կարապետյան Հայկ Հովհաննեսի	Վ.Սարգսյանի անվ. ռազմական ինստիտուտ	Տրանսպորտի կառավարում և շահագործման ինժեներ-բակալավր, համազորային հրամանատար	ԱՀՏԱ գծով տեղակալ
6	Թումասյան Արմեն Լենսիկի	Լենինականի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ	Ռազմագիտության և պատմության ուսուցիչ	
7	Տիգրանյան Տիգրան Գևորգի	Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ	Ռազմագիտության և ֆիզկուլտուրայի ուսուցիչ	Ռազմահոգեբանական ապահովման կազմակերպում

Ամբիոնի աշխատակիցներից 3-ը ունեն բարձրագույն զինվորական կրթություն, իսկ մյուս 4-ը ունեն մանկավարժական կրթություն:

Հաշվետու ժամանակամիջոցում «ՆԶՊ» մասնագիտությամբ կրթական ծրագրի մասնագիտական առարկաներ դասավանդող 7 սպաներից 4-ը, այսինքն մոտ 57%-ը՝ ըստ բազային կրթության ունեն մանկավարժի որակավորում, իսկ մյուս 3-ը ունեն բարձրագույն զինվորական կրթություն, բոլոր դասախոսներն ունեն երկարամյա գիտամանկավարժական գործունեության փորձ, որը հնարավորություն է տալիս արդյունավետ դասավանդման մեթոդներով իրականացնել կրթական ծրագիրը: Դասախոսական կազմից 3 մասնագետներ իրականացնում են դասընթացներ 5 և 6 առարկաներից:

2022-2023 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐ

№	Ազգանուն Անուն Հայրանուն	Գիտական աստիճան, կոչում	Դասավանդվող առարկաներ	Դասավանդվող առարկաների քանակը
1	Մկրտչյան Արթուր Վազգենի			
2	Տիտանյան Մուշեղ Միքայելի		Մարտավարություն, մարտական փաստաթղթերի մշակում և ձևակերպում	2
3	Մուրադյան Վարդան Աշոտի	մանկ. գ. թ.	ՌՀԴ մեթոդաբանություն, դաստիարակչական աշխատանքների կազմակերպումը ստորաբաժանումում, ռազմահայրենասիրական դաստիարակության հիմունքներ, ՆԶՊ դասավանդման մեթոդիկա, , շարային պատրաստություն	5
4	Հովհաննիսյան Գագիկ Արամայիսի		Կրակային պատրաստություն, Ռազմական տեղագրություն	2
5	Կարապետյան Հայկ Հովհաննեսի		Տեխնիկական պատրաստություն, ռազմարվեստի պատմություն, ՀՀռազմական դոկտրին, ՀՀպետ. անվտանգության ռազմավարություն, զինվորական առաջնորդություն, քաղ.պաշտպանություն և անվտանգ կենսագործունեություն	6
6	Թումասյան Արմեն Լենսիկի		Մարտավարություն, զին. կանոնադրություն	2
7	Տիգրանյան Տիգրան Գևորգի		Ռազմահիրավական պատրաստություն, ռազմական հոգեբանություն, ռազմական սոցիոլոգիա, ռազմարվեստ, միջազգային մարդասիրական իրավունք	5

Ամբիոնը որդեգրել է քաղաքականություն, որի համաձայն ի սկզբանե դասախոսին տրամադրված առարկայախումբը յուրաքանչյուր տարի թողնվում է անփոփոխ, որն էլ հնարավորություն է տալիս դասախոսին հմտորեն դասավանդելու առարկան, սակայն բաց է մնում տվյալ ուղղության հետազոտության ոլորտը: Այդ բացը լրացվում է հրամանատարական հավաքների ընթացքում:

Ամբիոնը հաշվետու ժամանակահատվածում ունեցել է 7 դրույք ծանրաբեռնվածություն, որն իրականացվել է 7 հիմնական դասախոսների կողմից:

2022-2023 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ՝ ԸՍՏ ԺԱՄԱՔԱՆԱԿԻ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ

№	Դասախոս	Կոչում, աստիճան	Ժամաքանակ	Դրույքաչափ
1	Մկրտչյան Արթուր Վազգենի	գնդապետ	276	1 դրույք
2	Տիտանյան Մուշեղ Միքայելի	փոխգնդապետ	621	1 դրույք
3	Մուրադյան Վարդան Աշոտի	փոխգնդապետ, մանկ.գիտ.թեկն.	1100	1 դրույք
4	Հովհաննիսյան Գագիկ Արամայիսի	փոխգնդապետ	833	1 դրույք
5	Կարապետյան Հայկ Հովհաննեսի	փոխգնդապետ	957	1 դրույք
6	Թումասյան Արմեն Լենսիկի	մայոր	720	1 դրույք
7	Տիգրանյան Տիգրան Գևորգի	մայոր	1051	1 դրույք
	ԸՆԴԱՄԵՆԸ		5558	7դրույք

Ամբիոնի դասախոսական կազմի 100 %-ը հիմնական աշխատակիցներ են:

Ուսանողների մասնակցությունը վերահսկվում է ամբիոնի ղեկավարության կողմից, անհարգելի բացակայողների հետ տարվում է բացատրական աշխատանք, անհրաժեշտության դեպքում նրանք ենթարկվում են կարգապահական տույժի, գրանցելով ուսանողի անձնական քարտում:

Ընդհանուր առմամբ բացակայությունները որակ չեն կազմում և չեն խոչընդոտում ուսումնական գործընթացին:

Ամբիոնում հաստատված է զինվորական կարգապահության պահանջվող մակարդակ, արտառոց միջադեպեր, կարգապահական կոպիտ խախտումներ հաշվետու ժամանակաշրջանում չեն գրանցվել:

Ամբիոնի դասախոսական կազմը և ուսանողները ակտիվորեն մասնակցել են ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղվածության տարբեր տեսակի միջոցառումների՝ այդ թվում 1988թ. Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված պսակադրություն, այցելություն Արցախյան պատերազմներին մասնակցած զոհվածների պանթեոն և պսակադրություն,Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանին պսակադրություն,

ՀՀ անկախության օրվան նվիրված էքսկուրսիա Սարդարապատի և «Ծիծեռնակաբերդ»-ի հուշահամալիրներ:

Ամբիոնի ղեկավարության կողմից օրըստօրե թարմացվում է ուսումնա-նյութական բազան՝ ցուցապաստառներ, դիտակտիկ վահանակներ թե ռազմա-մասնագիտական և թե ռազմահայրենասիրական ուղղվածությամբ: Փորձը ցույց է տալիս, որ նման հագեցվածությունը ոչ միայն օժանդակում և օգնում է, այլ նաև ամրապնդում է գիտելիքների կայունությունը: Ամբիոնն առաջնորդվում է հետևյալ կարգախոսով՝ ***կրթությունը հասարակության հայելին է, սերունդները հզոր են իրենց դաստիարակներով և երիտասարդությունն է ազգային գաղափարախոսության կրողը:*** Ուրեմն մեր և առանձնապես ռազմական ամբիոնի ողջ պոտենցիալը պետք է նպատակամղված լինի կրթադաստիարակչական աշխատանքների առավելագույնս ուղղորդմանը դեպի հասարակությանը պիտանի, զին.ծառայությանը հարմարված և հետագայում նույն հասարակության մեջ իր արժանի տեղը գրավելու հավակնություններով, արժանավայել և մասնագիտացված կադրեր պատրաստելու գործում:

Հեռանկարային գործառույթները ենթադրում են ոչ միայն ՀՀ ՊՆ վարչությունների և զորամասերի հետ համագործակցության հետագա խորացումն ու ընդլայնումը, առավելագույնս օգտագործելով զորամասերի նյութատեխնիկական բազան, այլ նաև տարբեր ոլորտներում համագործակցություն՝ այդ թվում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ:

Շարունակվում է դպրոցների զինղեկների վերապատրաստման դասընթացները ռազմական ամբիոնի բազայի հիման վրա դասախոսական կազմի ուժերով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության 08.04.22թ. թիվ 596-Ն որոշման հիման վրա ռազմական ամբիոնի կողմից նախապատրաստվել, կազմվել է ՆԶՊ ուսուցիչների սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման քննության թեստը, ուղեցույցը, պատասխանների ձևաթուղթը և ատեստավորումը:

Այս բոլորի հետ միասին հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի աշխատանքներում կան որոշակի խնդիրներ, որոնց լուծումը կնպաստի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Կուրսային աշխատանքները և մագիստրոսական թեզերը պատշաճ մակարդակով ներկայացնելու համար ամբիոնի գրադարանին անհրաժեշտ է ռազմամասնագիտական և մանկավարժագիտական գրականություն: Այդ նպատակով ամեն տարի ամբիոնի ղեկավարության կողմից ՀՀ ՊՆ համապատասխան վարչություն հայտ է ներկայացվում գրականության, ռազմաուսումնական գույքի հատկացման վերաբերյալ, սակայն հատկացումները չեն բավարարում ուսանողների թվաքանակին: